ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-705[2]-13.11.2023-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. 40-րդ հոդվածի 6-րդ կետը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 կետով.

«3.1. Սույն օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթն ուժի մեջ է մտնում 2023 թվականի դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից.» .

2) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանվում են Կառավարության կողմից երկու տարվա ընթացքում.»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանվում է Կառավարության կողմից մեկ ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. 40-րդ հոդվածը ի 6-րդ կետը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 կետով.

«3.1. Սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթն ուժի մեջ է մտնում 2024 2023 թվականի դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից.÷» .÷

2) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց

փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանվում են Կառավարության կողմից երկու տարվա ընթացքում.»:

Հոդված 3. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանվում է Կառավարության կողմից մեկ ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված ««Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Կ-705-13.11.2023-ՏՏԳՇ-011/0**, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին»** Կ-705[1]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0**, «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»** Կ-705[2]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0 **օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների**

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյանի առաջարկները	1. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ Կ-705-13.11.2023-ՏՏԳՇ-011/0	Ընդունվել է:	Ընդունվել է:

	1.Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերով: 2. Նախագծի 1-ին հոդվածի «ձկնաբուծական տնտեսություններում» բառերը փոխարինել «ձկնաբուծարաններում» բառերով, իսկ «%» նշանը փոխարինել «տոկոս» բառով: 3.Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. **«Հոդված 2.** Օրենսգրքի 33.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով. «8) Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալների նվազեցում նախատեսվելու դեպքում՝ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալները տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի միջոցով		

	ստացված ջրառի փաստացի ծավալներին համապատասխանեցնելու նպատակով:»:»		
	2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ Կ-705[1]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0 1.Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառից առաջ լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը: 2. «Օրենքի նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. «5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 5. Ջրօգտագործման թույլտվությամբ ամրագրված ջրառի և էկոլոգիական թողքի կետերում ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի	2. Ընդունվել է:	Ընդունվել է:

	տեղադրման պահանջները չկատարելը կամ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքի խափանման, տվյալների առցանց փոխանցման դադարեցման, վթարի վերաբերյալ կարճ հաղորդագրությունների կամ էլեկտրոնային փոստով ծանուցումից հետո սարքի վթարը կամ խափանումը սահմանված ժամկետում չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով։»		

	3.Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:»		
	3. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ Կ-705[2]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0 1. Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ»: 2. Նախագծի 2-րդ հոդվածի, օրենքի 27-րդ հոդվածի «1-ին մասի» բառերը հանել, «2024» թիվը փոխարինել «2023» թվով: 3. Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.	3. Ընդունվել է:	Ընդունվել է:

	«2) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման և շահագործման կարգերը սահմանվում են Կառավարության կողմից երկու տարվա ընթացքում.»: 4. 3-րդ հոդվածի վերնագիրը հանել:		